ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՎԻՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԽՆԴԻՐԸ

ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ՝
ԾՆՆԴՅԱՆ 150 ԵՎ ՄԱՀՎԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Հայաստանի պաշտամունքային շինությունների առաջին ուսումնասիրությունը՝ հրատարակված դեռևս 1839-ին, պատկանում է ֆրանսիացի գիտնական Դյուբուա դե Մոնպերյեին: Օտարազգի և հայ գիտնականների մեծագույն ավանդը գնահատելով հանդերձ՝ վերանայման խնդիրն առաջադրելու առիթը, ինչպես նաև վերջնական եզրակացության հանգելու հիմքը եղել և մնում են Թ. Թորամանյանի հանճարեղ կռահումները: Սա ի գիտություն:

Մեր ուսումնասիրություններում առաջադրված տեսակետը հետևյալն է՝ Հայաստանի բազմաթիվ տաճարների կառուցման ժամանակը կամ ժամանակագրական սահմանները որոշադրելու համար մինչ օրս հիմք ընդունված սկզբունքներն ու փաստարկներն անընդունելի են, ուստի և վաղ միջնադարի ճարտարապետության պատմությունը կարիք ունի վերանայման[1]: Հայագիտության մեջ առաջին անգամ 1985-ին և այնուհետ՝ մեր կողմից բարձրացված խնդրի հիմնական հասցեատերերը, բնականաբար, ճարտարապետության պատմության մասնագետներն էին, ովքեր վիճարկելու պարագայում պարտավոր էին մատնանշելու թեկուզ մեկ ապացույց կամ անուղղակի փաստերի վրա արված մեկ դատողություն: Սակայն զարմանալին և, թերևս, տարօրինակն այն է, որ ճարտարապետները, ինչպես նաև առանձին հուշարձաններով զբաղվող՝ հայագիտության մյուս ճյուղերի մասնագետները, տեսական և գործնական լուծում պահանջող հարցը շրջանցելով, շարունակում են կրկնել ընդունված թվագրումները, կամա, թե ակամա հաստատում և տիրաժավորում

---

[1] *Տես*՝ В. Г. Григорян. О первоначальной композиции Эчмиадзинского кафедрального собора.— Четвертый международный симпозиум по армянскому искусству. Тезисы докладов. Ереван, 1985, с. 91—93. *Վ. Գրիգորյան. Էջմիածնի Մայր տաճարը.– ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, -7, էջ 77–85, նույնի՝ Հայաստանի վաղ քրիստոնեական պաշտամունքային կառույցների թվագրման խնդրի շուրջ (Երերույքի և Տեկորի բազիլիկների հիմնադրվելը հեթանոսական շրջանում որպես մեհյաններ).– Հայագիտական միջազգային համաժողով, Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները (Զեկուցումների դրույթներ), Երևան, 2003, էջ 172–173, նույնի՝ Աղձք գյուղի ճարտարապետական համալիրը.– ՊԲՀ, 2005, -2, էջ 279–289, նույնի՝ Էջմիածնի Մայր տաճարը.– Հայ արվեստի հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու), -3, Երևան, 2010, էջ 466–481, նույնի՝ Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» և Հայաստանի վաղ միջնադարի ճարտարապետության ուսումնասիրության խնդիրները.– ՊԲՀ, 2012, -1, էջ 14–37, նույնի՝ Մայր տաճարի հնագույն երեք քանդակների թվագրման խնդիրը.– ՊԲՀ, 2012, -3, էջ 3–20:*

դրանք: Պատճառը, թեև հասկանալի է, սակայն մեղքը վերագրենք մեզ, և խնդիրը ներկայացնենք հնարավորինս հակիրճ և դյուրըմբռնելի:

Հայաստանի Ք. ա. IV-ից մինչև Ք. հ. VII դարերի ճարտարապետությունը ներկայացնելու համար ուսումնասիրողները ելակետ և հիմք են ընդունել երկու տեսակետ. առաջին՝ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու նախաշեմին հեթանոսական պաշտամունքային շինությունները, բացառությամբ Գառնիի տաճարի, անխնա ոչնչացվել են, երկրորդ՝ քրիստոնեական տաճարաշինությունը, իմա՝ ճարտարապետությունը, հայոց պատարագի պահանջների զարգացմանը զուգընթաց՝ ընթացել է քայլ առ քայլ, փուլ առ փուլ, պարզից դեպի ավելի բարդ հորինվածքների ստեղծման ճանապարհով:

Մատենագրական վկայությունների, մասնավորապես, Ագաթանգեղոսի «Պատմություն հայոց» աշխատության մանրամասն քննությամբ ցույց ենք տվել, որ Տրդատ թագավորի հրամանով և Գրիգոր Լուսավորչի ակտիվ մասնակցությամբ ոչնչացվել են ոչ թե հեթանոսական տաճարները, այլ հեթանոսական կրոնի խորհրդանշան բագինները՝ սեղան և կուռքի պատկեր, և դրանք փոխարինել են քրիստոնեական խորհրդանշաններով՝ սեղան և խաչի պատկեր: Այսինքն՝ հեթանոսական տաճարները սրբագործել են և այդ նույն տաճարներում հեթանոս աստվածների փոխարեն երկրպագել են քրիստոնյաների աստծուն: Ինչ վերաբերում է տաճարների ոչնչացման աննախադեպ և անհավանական վանդալիզմը մեղմելու ու ամեն կերպ արդարացնելու ճիգերին, իբր, մեհյանների շինությունները չեն բավարարել նոր կրոնի պահանջներին, ապա մեր պատմիչները առիթ բաց չեն թողել և բազմիցս, չափազանց պարզ ու հասկանալի ոչ միայն բացատրել են կուռքերի անհեթեթությունը, անօգտակարությունը, վնասակարությունը, դրանց երկրպագողներին գեհենի անշեջ հրի մեջ հայտնվելու անխուսափելի վտանգը, այլև մատնացույց են արել փրկության միակ ելքը՝ ոչնչացնել ու անհիշատակ դարձնել անխտիր բոլոր կուռքերը: Այսուհանդերձ, հեթանոսական տաճարների հատակագծային ու ծավալատարածական հորինվածքի կամ որևէ մանրամասնի անհեթեթության, անօգտակարության, վնասակարության, նոր կրոնի պահանջներին անհարիր լինելու, առավել ևս, դրանք ոչնչացնելու և նոր տաճարներ կառուցելու մասին պատմիչների աշխատություններում որևէ խոսք, անգամ ակնարկ գոյություն չունի: Եթե հիշենք Նոր Կտակարանի վկայությունն այն մասին, որ Երուսաղեմի տաճարի շենքը Հիսուսը համարում է իր հոր տունը, ինչպես նաև՝ մեհյանը որպես եկեղեցի, եկեղեցին որպես մզկիթ և մզկիթը որպես եկեղեցի օգտագործելու բազմաթիվ հանրահայտ օրինակները, ապա կարող ենք միանշանակ պնդել, որ հեթանոսական տաճարները չեն ոչնչացվել, առավել ևս չեն համբարձվել: Այսօր անհրաժեշտ է ջանալ և քրիստոնեական համարվող հարյուրավոր տաճարների մեջ ճանաչել հեթանոսականները[2]: Այս կերպ Հայաս-

---

[2] *Երերույք, Տեկոր, Եղվարդ, Դվին, Աշտարակ, Քասաղ, Փարպի, Ծիծեռնավանք, Պեմզաշեն, Օձուն (եռանավ), Շիրվանջուղ, Թանահատ, Գառնի, Արագյուղ, Բայբուրդ (միանավ), Աղձք (եկեղեցին և դամբարանը), Արթիկ (սբ. Մարինե) տաճարները, որոնց թիվն անկասկած վերջնական չէ, ամենայն հավանականությամբ, հիմնադրվել են քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց առաջ: Հիշյալ տասնութ տաճարներից տասնհինգը, առանց որևէ հիմնավորման, իսկ մի քանիսն անգամ հեթանոսական համարելով, թվագրվել են IV–VII դդ.: Ինչ վերաբերում է երեքին, ապա Տեկորի տաճարի 480-ականների արձանագրությունը կառույցի հիմնադրմանը*

տանի ճարտարապետության պատմության էջերում իր օրինական և արժանի տեղը կգտնի ոչ միայն հազարամյա հեթանոսական ճարտարապետական մշակույթը, այլև քանդակագործությունը, որմնանկարչությունը:

Դրույթ առաջին. շրջանառության մեջ դրված առաջին տեսակետը, ըստ որի հեթանոսական տաճարները ոչնչացվել են և չեն հասել մեզ, մատենագրական վկայությունների թյուրըմբռնման և մեկնաբանման արդյունք է:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո կառուցված, ինչպես նաև հեթանոսական՝ հանիրավի քրիստոնեական համարվող տաճարների կառուցման ժամանակը որոշադրելու համար, ուսումնասիրողների կողմից ներկայացված սկզբունքներն ու փաստարկները և կառույցներում ու մատենագրական վկայություններում առկա փաստերն այնքան իրարամերժ են, որ դրանց մանրամասն անդրադառնալու անհրաժեշտություն ամենևին չկա: Նկատենք միայն, որ քրիստոնեական ճարտարապետության սկիզբը ներկայացվում է այնպես, կարծես, խոսքը վերաբերում է տաճարաշինությունից անտեղյակ և աշխարհից մեկուսացած ինչ-որ ցեղախմբի: Իբրև հետևանք նման մեկնակետի, մեզ հասած շինությունների առանձին մասերը՝ խորան, ավանդատուն, սյունազարդ սրահ, բազմաստիճան որմնախարիսխ, գմբեթ …, համարվում են հետագայում արված հավելումներ, տաճարները թվագրվում, ավելի ստույգ դասավորվում են IV–V դարերում և ներկայացվում են իբրև հատակագծային ու ծավալատարածական հորինվածքների պարզից դեպի բարդը զարգացման արդյունք[3]: Պարզից էլ պարզ է, որ այստեղ գործ ունենք □Նորը և հինը», «Ստորինից դեպի բարձրը», «Պարզից դեպի բարդը» հասկացությունների բառացի ընկալման և մեկնաբանման հետ:

Դրույթ երկրորդ. շրջանառության մեջ դրված երկրորդ տեսակետը, ըստ որի քրիստոնեական ճարտարապետությունն ընթացել է պարզից դեպի բարդը զարգացման ճանապարհով, բացարձակապես սխալ և անընդունելի է:

վերագրելու, ինչպես նաև Թանահատի տաճարը 151 թվականին կառուցված լինելու վկայությունը արտագրող գրչի սխալը համարելու կարծիքները փաստական հիմք չունեն: Իսկ Բուզանդի և Խորենացու տեղեկությունների հիման վրա Աղձքի դամբարանը 364 թ. կառուցված և ստույգ թվագրված հուշարձան համարվող պնդումը, մատենագրական տեղեկությունների սխալ ընկալման և մեկնաբանության տիպիկ օրինակներից մեկն է:

[3] *Դիցուք, Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի օրոք կառուցված Մայր տաճարին անդրադառնալիս ուսումնասիրողները, առանց բացառության, սկսում են «առաջին տաճարը» կամ «սկզբնական տաճարը» բառակապակցություններով և, հայ ճարտարապետությանը հայտնի, նույնիսկ անհայտ հորինվածքային տիպերը պարզից բարդը շարելով, ներկայացնում են իբրև կառույցի ձևակերտման ընթացքի պատկեր: Ի սկզբանե ընդունված և այսօր էլ շրջանառվող միակ տեսակետի համաձայն՝ պարսկական գորքի կողմից ավերված և մասնակի նորոգումների ենթարկված Մայր տաճարը Վահան Մամիկոնյանի օրոք քանդվել է ու հիմն ի վեր կառուցվել է նոր տաճար և մեզ հասած շինության՝ հորիզոնական քիվից ներքև ընկած մասը, այսինքն՝ հատակագծային, և ծավալատարածական հիմնական հորինվածքը պատկանում է 480-ականներին: Կառույցում այս տեսակետը հաստատող որևէ փաստ բացարձակապես գոյություն չունի: Ավագ խորանի ներսում, անկասկած, հետագայում արված հավելումները Լուսավորչաշեն տաճարին վերագրելու, ինչպես նաև, անշուշտ, միջնադարում շինված թոնիրներից մեկը ատրուշան համարելու տեսակետները ոչ միայն մտացածին են, այլև՝ զավեշտալի: Ինչ վերաբերում է իբրև ապացույց բերված մատենագրական վկայությունների մեկնություններին, ապա դրանք Ագաթանգեղոսի, Բուզանդի, Փարպեցու և մյուս պատմիչների տեղեկությունների, մեղմ ասած, սխալ ընկալման արդյունք են:*

Անվիճելի է, որ սխալ ելակետից բխող բոլոր դատողություններն անխուսափելիորեն պիտի բերեին սխալ եզրահանգման: Միայն այն փաստը, որ մեզ հասած տաճարների թվագրման, համեմատական վերլուծության, ազդեցության ու փոխազդեցության հարցերը մեկնաբանվել և ներկայացվել են վերոհիշյալ՝ մինչ օրս անառարկելի համարվող, երկու տեսակետների հիման վրա, կարծում ենք, ավելի քան բավարար էր, որպեսզի ճարտարապետության պատմության վերանայման խնդիրն առաջադրեինք: Տարբեր լեզուներով հրատարակվող գրքերը, գիրք-ալբոմները, հոդվածները, բուկլետները, հանրապետական ու միջազգային համաժողովներում հնչեցրած ելույթները վկայում են, որ ճարտարապետության պատմության ներկա վիճակը հայագիտությամբ զբաղվող բոլոր մասնագետներին լիովին բավարարում է:

Թ. Թորամանյանը, անդրադառնալով Հայաստանի ճարտարապետության ուսումնասիրության վիճակին, գրում է. «… չափազանց ուրախալի է տեսնել, որ կան զուտ պատմական ուսումնասիրության նվիրված հայ գիտնականներ, բայց, իհարկե, այս գիտնականները պատմական զանազան խնդիրների շուրջ զբաղված են ըստ իրենց մասնագիտության, բնականաբար անոնցմե չէ կարելի պահանջել, որ ուսումնասիրեն նաև պատմական շրջանի Հայաստանի հին ճարտարապետությունը, որովհետև անոնց մասնագիտությունը չէ. այս ճյուղի ուսումնասիրությունը պետք է պահանջել իր մասնագետներից՝ ճարտարապետներից»[4]*:*

Այն, որ մասնագետը պետք է զբաղվի իր մասնագիտությամբ, հասկանալի է: Մնում է պարզել, թե հայագիտության կարևոր ճյուղերից մեկի՝ ճարտարապետության պատմության պահանջատերն ով է, և, ամենակարևորը, ումից պետք է պահանջել, եթե ակներև է, որ ճարտարապետները նախընտրում են զբաղվել ցանկացած գործով, բայց ոչ պատմական շրջանի ճարտարապետության պատմության ուսումնասիրությամբ:

Եզրահանգում. մշակույթի համընդհանուր պատմության բացառիկ արժեքավոր ժառանգության՝ Հայաստանի հեթանոսական և վաղ քրիստոնեական հազարամյա ճարտարապետությանը վերաբերող խնդրի լուծման առաջնահերթ ու միակ պայմանը հայագիտության այս ճյուղի համակարգային փոփոխության իրականացումն է:

ЗАДАЧА ОСНОВАТЕЛЬНОГО ПЕРЕСМОТРА ИСТОРИИ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ

ВААГН ГРИГОРЯН

Резюме

Представляя армянскую архитектуру с IV в. до н. э. по VII в. н. э., исследователи взяли за основу две позиции: первая – на пороге провозглашения

[4] *Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 2013, էջ 80:*

христианства государственной религией Армении все языческие памятники, за исключением храма в Гарни, беспощадно были уничтожены; вторая – строительство христианских храмов, а именно, архитектура развивалась шаг за шагом, этап за этапом, от простых до более сложных композиций, параллельно со становлением богослужения в армянской церкви и разработкой его требований. Однако детальное рассмотрение письменных источников свидетельствует, что уничтожались не храмы, а символы язычества, которые заменялись христианскими символами, т. е. языческие храмы освящались, и в них, вместо поклонения языческим богам, поклонялись христианскому богу. Таким образом, первый тезис об «уничтожении» языческих храмов является следствием искажения и неверного толкования письменных данных. Представленные исследователями факты о времени сооружения храмов после принятия христианства, как и храмов, не по праву считающихся христианскими, настолько противоречат данным, поставляемым, как самими архитектурными памятниками, так и письменными источниками о них, что их детальный анализ даже не требуется. Второй тезис, касающийся христианской архитектуры, также является следствием неверного и буквального восприятия таких понятий, как «От низкой к высокой», «Новой и старой», «От простой к сложной». Один только факт, что датировка, сравнительные анализы, вопросы взаимовлияний создаваемых на протяжении тысячелетий, имеющих исключительную ценность для Армении и всеобщей истории культуры культовых зданий рассматривались на основе двух вышеприведенных позиций, по нашему мнению, достаточен для того, чтобы еще раз обратиться к пересмотру истории армянской архитектуры, предложенному еще в 1985 году.

THE PROBLEM OF FUNDAMENTAL REVISING THE HISTORY OF ARMENIAN ARCHITECTURE

VAHAGN GRIGORIAN

Summary

To present the Armenian architecture of the 4th century B.C. up to the 7th century A.D., the researchers have taken two viewpoints as a starting point and basis: firstly, on the threshold of adopting Christianity as state religion, all pagan cultic structures (except the temple of Garni) were mercilessly destroyed; secondly, parallel to the development of the requirements of Armenian liturgy, the Christian temple-building, i.e. architecture, evolved step by step and phase by phase, i.e. along the way of creating compositions from simple to more complex ones. However, a detailed examination of the evidences in historiography proves that not the temples, but the symbols of pagan religion were destroyed and replaced by Christian symbols. That is to say, pagan temples were consecrated, and the Christian God was worshipped instead of pagan gods in the same temples. **So, the first viewpoint of**

"destroying" the pagan temples is the result of misunderstanding and misinterpreting the evidence in historiographical sources.

The researchers' principles and arguments when determining the construction date of the churches built after the adoption of Christianity as state religion, and the construction dates of the pagan temples, which were wrongly considered Christian, as well as the facts available in the structures and evidence in literature are so contradictory that there is no necessity to touch upon them in a detailed way. **The second viewpoint concerning the development of Christian architecture is the result of literal perception of the notions "from lower to higher", "the new and the old", "from the simple to the complex" and their wrong interpretations.**

We think that only the fact that the questions of dating, comparative analyses, influence and interaction of cultic structures built during the millennial period, which are exceptionally valuable in the heritage of Armenia, as well as in the general history of culture, were interpreted and presented on the basis of the above mentioned two viewpoints, is more than sufficient to reflect once more upon the revision of the history of Armenian architecture, a problem, which was proposed as far back as 1985.